ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 սեպտեմբերի 2025 թվականի N 446-Ա

«ՈՐՈՏԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՇՈՒՇԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՆՈՒՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԴԱՍՎԱՐ ԻՐԻՆԱ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով և հիմք ընդունելով «Որոտանի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի գրությունը՝

ո ր ո շ ու մ եմ.

2025 թվականի սեպտեմբերի 21-ից 25-ը Երևանի թիվ 42 միջնակարգ դպրոցում կայանալիք՝ «Հայաստանում կրթական առաջնորդության զարգացման-Դպրոցի ղեկավարների ծրագիր» դասընթացին մասնակցելու նպատակով գործուղման մեջ գտնվելու ժամանակահատվածում «Որոտանի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Շուշիկ Ստեփանյանի պարտականությունների կատարումը վերապահել նույն կազմակերպության դասվար Իրինա Պողոսյանին:

2025-09-22 17:26.30 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

2025թ. սեպտեմբերի 22
ք.Կապան